կ'սկսեն հրացանաձգութիւն և երեխայքը ու շրջապատողները կրկանչեն՝ «խաբեցինք, առանք» [1]։

Շիրակում մինչև քահանայի գալն ու նշան օրհնելը հարսի տանը հաւաքուած փեսայի ազգականները զանազան խորտիկներով լի սեղանը վայելելուց յետոյ, հարսնացուի ծնողներին ու մերձաւորներին լացացնելու նպատակով բղաւելով երգում են՝ «Տանում, տանում են, ատէ ջան» երգը [2]։

Ախալցխայի գաւառում, նմանապէս շատ տեղերում, խաչեղբայրը պսակի առաջին գիշերը չի քնում և հսկում է, վախենալով՝ մի գուցէ աղջկայ եղբայրը գողանայ նրանից փեսայի թուրը. և եթէ գողացուի՝ դա մեծ անպատուութիւն է համարւում փեսայի համար։

Դարալագեազում հարսնածի ժամանակ ազափներն ու թագաւորի կողմի մարդիկ դուրսը կանգնած, դիտմամբ գոչումներ են անում «ճիննինի, ճիննինի, հարսը տարան» որպէսզի բարկացնեն հարսի ծնողներին ու բարեկամներին։ Այդ հրաժարականի, լացի, աղմկի և ուրախութեան ժամանակ ազափներից մինը, որ կոչւում է աղուէս, ընկնում է հարսի հօրանց հաւերի յետևից և ծածուկ աշխատում է բռնել նրանց ու տանել, որպէսզի յետոյ ազափներն ուտեն, քէֆ անեն [3]։

Գանձակի գաւառում հարսնածի ժամանակ մակարներն ու ազափները ծաղրում են հարսնամօրը երգելով.

Մէջդ կոտրի, հարսնամէր,
Կուռդ կոտրի, հարսնամէր,
Ոտդ կոտրի, հարսնամէր,
Աչքդ դուրս գայ, հարսնամէր,
Ա՜յ, բէյմուրվաթ, էս ինչա,
Ռախէդ գնում ա, էլ չի գալ [4]։

---

[1]) Ալլահվերդեան,—Ուլնիա կամ Զէյթուն։

[2]) Էմինեան Ազգագրական ժողովածու. հատ. Ա. երես. 247.

[3]) Քաջբերունի՝ Հայկական սովորութիւններ—Ազգագրական Հանդէս. 1901 թ. գիրք VII և VIII եր. 179.

[4]) Եր. Լալայեան՝ Գանձակի գաւառ—եր. 32—33.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան